ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի հայրենակիցներ,

Ի սրտե շնորհավորում եմ մեր ժողովրդի ամենասիրելի ու նվիրական տոներից մեկի՝ Հաղթանակի եւ խաղաղության օրվա կապակցությամբ: Տոնն, իսկապես, մեծ խորհուրդ ունի եւ կրկնակի տոնական է՝ հաղթանակ Մեծ հայրենականում եւ Շուշիի ազատագրման օր:

Աշխարհի խաղաղասեր մարդկությունն այսօր տոնում է Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի եւ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտի 70-ամյակը: Հայրենական մեծ պատերազմի հաղթանակը ձեռք է բերվել նաեւ բազմաթիվ հայ քաջորդիների ինքնազոհողության եւ հերոսացման գնով՝ մեր ժողովրդի համար ապահովելով խաղաղ ապրելու եւ արարելու լիարժեք հնարավորություն: Երկրորդ աշխարհամարտի ավարտն ու խաղաղության հաստատումը Հայաստանի համար ունեցան բախտորոշ նշանակություն:

Մենք այսօր մեծագույն հպարտությամբ ենք նշում նաեւ Շուշիի ազատագրման փառապանծ տարեդարձը: Մեզ պարտադրված պատերազմում ապացուցեցինք, որ պատրաստ ենք պայքարել ու հաղթել մեր ժողովրդի ազատության, անկախության համար եւ վաստակել խաղաղ ապրելու իրավունքը:

Հայ ժողովրդի բազմադարյա պատմության հերոսական դրվագների ոգեկոչման, ռազմարվեստում ձեւավորված փառավոր ավանդույթների եւ ոգու ամրության վրա են խարսխված մեր նորօրյա հաղթանակները, որոնց վառ վկայություններից են 1990-94 թվականները.: Հերոսների հայրենասեր ոգին հայրերից փոխանցվել է այսօրվա քաջարի զինվորներին, ովքեր նորանոր սխրանքներ են դրսեւորում եւ ապահովում մեր հայրենիքի սահմանների անառիկությունը, երկրի խաղաղությունը:

Կրկին շնորհավորում եմ Հաղթանակի եւ խաղաղության տոնի առթիվ, մաղթում հարատեւ խաղաղություն եւ բարօրություն: